

Ա Յ Ս Տ Ե Ղ

Այստեղ մարդիկ դէպի շիրիմ կը քալեն,
Աչքերուն մէջ տուներն կ'իջնեն ամէն օր.
Կը մարմըրի շողն իրիկունսն յամբօրէն,
Կը սկսի նոյն սրտի հառաչն ամէնուր:

Երբ կը բացուին վարդերն ուրախ արեւով,
Խորշակ կու գայ զանոնք հողին հակելու.
Երբ երկու շուրթ կը սեղմուին համբոյրով,
Հեւք մ'ունի միշտ երջանկութիւնն սիրելու:

Այստեղ յոյսերն աստղերու պէս կը փթթին,
Բայց կու գայ սեւ ճակատագիրն ամպելու.
Երբ փողոցներ արեւալիւր կը բացուին,

Սեւ լաչակով կ'անցնին ինքն յուզարկու:
Հող էր դու, հող պիտ' ըլլաս, ըսուեցաւ,
Այստեղ չըկայ երջանկութիւնն սիրելու:

ԱՆԾԱՆՕԹ ՍԷՐ

Դու երազներս յաճախ կու գաս ցրուելու,
Պէտք է վարուիլ աշպէս սրտին հետ թեթեւ.
Վիշտեր կան որ քրնար չունին երգելու,
Բայց անհուն է խորհուրդն անոնց անարեւ:

Անծանօթ սէր, դեռ մանուկ ես այս կեանքին,
Լոկ կը տեսնես շուրջդ ժրպիտ ու ծաղիկ.
Սեւ հող է միշտ վերմակին տակ դալարին,
Առանց վշտի չըկան աչքեր գեղեցիկ:

Հեռուներէն ըոյր կը բերես սրտերու
Եւ ոսկեղէն մառախուղներ տենչանքի.
Սիրտ մը զըտա՞ր առանց դադաղ մը լալու,

Եւ պատուհան վարագոյրի տակ ոսկի:
Թեւի հարուած մ'իսկ կը ճեղքէ սիրտն յաւէտ,
Այսպէս թեթեւ պէտք է խաղալ սրտին հետ:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՎԵՆԵՏԻԿ, 1959

Այն օրէն ի վեր, յորում ճանչցայ քեզ
Քիչ մը փոխուեր ես,
Նորաչէն տուներ ջրանցքներդ ի վեր
Սիրտըդ կը խոցեն.
Սակայն ափէ ափ թաւալող ծովուդ
Բացերը նոյն են,
Նոյն են ալիքներդ, որոնց շարժման մէջ
Կը ձայնէ անքուն.
Երկնքէդ առկախ փանդիւռն համերեան
Կայտա՞ն հողմերուն:

Այն օրէն ի վեր, յորում տեսայ քեզ
Քիչ մը մեծցեր ես,
Սակայն զըռհներդ միեւնոյն ոլոր
Լարիւրինթոսն են,
Ու երկինքդ ալ նոյն, որուն խորունկէն,
Կ'անցնի թեւանցով.
Լըճակէդ հասնող սիւղին հետ մէկտեղ
Լոյսը Յուլիսի.
Իսկապէս, թոյրի, երգի, խնդութեան
Դուն հարսն ես ծաւի:

Այն օրէն ի վեր, յորում ճանչցայ քեզ
Քիչ մը փոխուեր ես.
Սակայն ջուրերուդ ծոցին մէջ յաժող
Լուսնակն է միշտ նոյն,
Միշտ նոյն են խօսքերդ, որոնց մեղեդին
Սրտիս մէջ մեղմիկ
Կ'իջնէր հունչ առ հունչ, երբ '25ին
Քու սիրոյն ի սէր.
Կը մոռնայի գիրք, զանգ եւ ուսուցիչ,
Դա՞ն ու դասընկեր:

Այն օրէն ի վեր, յորում տեսայ քեզ
Ես ալ եմ փոխուեր,
Ա'լ չըկան քունքիս գանդուր ծամերուն
Խաղերը խարտեաչ,
Ա'լ չըկան գարնան կարմիր վարդերուն
Ժրպիտներն ու ցօղ,
Այսպէս, դուն եւ ես, կանգնած դէմ դիմաց
Կ'որոնենք զիրար,
Կ'որոնենք զիրար անցեալի չքերդ.
Երազին մէջ վառ...:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

Վեներիկ, 5 Յուլիս 1959